տանի և՛ պետական, և՛ հասարակական, և՛ անհատական կեանքի բոլոր արտայայտութիւնները եւ ըստ այնմ համապատասխան օրէնքներ սահմանել, համարեա ոչինչ չի ասում այն մասին, թէ ի՞նչպիսի փոխյարաբերութիւն պիտի ունենայ հայ ժողովուրդը իր հարեւանների եւ առհասարակ օտար պետութիւնների հետ: Զկայ եւ ոչ մի օրէնք առ այն, թէ Հայաստանը ո՞ւմ հետ եւ ի՞նչպիսի յարաբերութիւններ պիտի պահպանի — նամանաւանդ, խաղաղ ժամանակ: Նրա համար Հայաստանը, կարծէք, մի ռոբինզոնեան կղզի է, կտրուած աշխարհի միւս պետութիւններից ու ժողովուրդներից եւ ինքն իր մէջ ամփոփուած:

Միակ օրէնքը, որ յիշեցնում է, թէ աշխարհիս երեսին, բացի Հայաստանից, կան նաեւ ուրիշ երկրներ ու պետութիւններ եւս, դա այն է, որ Հայաստան ապաստանած քրէական յանցաւորը — ինչ երկրից ու ազգից էլ լինի, պատերազմի թէ խաղաղ ժամանակ — չի յանձնւում իր պետութեանը, այլ մնալով Հայաստանում, վայելում է հայոց տան հովանաւորութիւնը (յիզ):

Բայց կան մի չարք օրէնքներ, որոնք վերաբերում են Հայաստանի միջազգային դիրքին, պատերազմի ժամանակ. աւելի ճիշդ՝ նրանք որոշում են, թէ Հայաստանը, պատերազմի ժամանակ, իր թշնամիների նկատմամբ, ի՞նչ կարող է անել եւ ինչ չանել: Այդ օրէնքներից մենք իմանում ենք, օրինակ, որ արգելւում է պատերազմում վերցրած գերիներին — քրիստոնեայ թէ հեթանոս — վաճառել. այլ նրանց պէտք է խնամքով պահել, որպէսզի պատերազմից յետոյ՝ կամ փոխանակենք մեր գերիների հետ — եթէ կան եւ կամ փրկանք ստանալով, ազատ արձակենք (յժե):

Նոյն կարգին պատկանող միւս օրէնքները հրամայում են մեզ — եթէ որեւէ բերդ, քաղաք կամ աշխարհ դաշնադրութեամբ գրաւում ենք մենք, պէտք է հաւատարիմ մնանք դաշնադրութեան թելադրած բոլոր պայմաններին (յի): Կամ՝ պատերազմի ժամանակ անձնատուր եղած զինուորի ու զինուորականի կեանքը անպայմանօրէն պէտք է խնայենք (յժը), եւայլն:

Քիչ են այդ կարգի օրէնքները, սակայն այդ քչից էլ մենք յստակօրէն տեսնում ենք, թէ ո՛րքան մարդասէր վերաբերմունք ունի մեր հեղինակը դէպի օտար ազգութիւնները, անգամ Հայաստանի թշնամի եւ նրա դէմ կռուի մէջ գտնուող օտար ազգութիւնները:

ՕՐԷՆՔՆԵՐԻ ՈԳԻՆ, ՊԱՏԻԺՆԵՐԸ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պէտք է արձանագրել, որ Շահամիրեանի օրէնքների ոգին ընդհանրապէս մեղմ է ու մարդասէր, մանաւանդ երբ ի նկատի ենք առնում, որ գրողը Պարսկաստանի դաժան օրէնքները ճաշակած մի ընտանիքի զաւակ է, այն էլ ԺԸ. դարի Պարսկաստանի:

Անշուշտ, Եւրոպայի լուսաւոր ազդեցութեան շնորհիւ է, որ մարդը նրա աչքում արդէն մի որոշ արժէք է ներկայացնում, որի կեանքը թանդ է նրա համար: Եւ եթէ նա պատժում է մարդուն, պատժում է ոչ թէ վրէժխնդրութեան կրքից տարուած, այլ մարդասիրութիւնից դրդուած, մարդուն ազդելու մտադրութեամբ:

Դրա բազմաթիւ ապացոյցները մենք արդէն տեսել ենք մինչեւ այժմ. սակայն հետեւեալ երկու օրէնքները աւելի են շեշտում այդ:

1. Անշափահաս քրէական յանցաւորը — 19 տարեկանից փոքր — չի պատժւում, այլ միայն խրատուելով, ազատ է արձակւում (մ):

2. Քրէական եւ այլ յանցանքների համար պատժւում է միմիայն յանցաւորը եւ ոչ թէ նրա ազգականները, ինչպէս այդ, մինչեւ վերջին ժամանակները, ընդունուած էր Պարսկաստանում (մժդ, մժե):

Շահամիրեանի պատիժները, բոլոր հնարաւոր դէպքերում, հիմնուած են Աւետարանի այն պատուէրի վրայ, որ ասում է՝ ինչ որ կամենում ես, որ ուրիշները քեզ անեն, նոյնն էլ դու ուրիշներին արա. այսպէս՝ ծեծողը ծեծւում է իրենից ծեծուածից. եթէ անգամ ծեծողը քահանայ է, դատարանի առջեւ ծեծուողը նրան ծեծում է (ճղբ, ճի). կամ՝ եթէ հարբածը վիրաւորում է մէկին, ինքն էլ հարբեցւում է եւ այդպէս պատժւում, իսկ եթէ սպանում է, հարբեցւում է եւ սպանւում (ճիա, ճիբ):

«Որոգայթ Փառաց»ի մէջ սահմանուած պատիժները կարող ենք բաժանել 4 խմբի.—